




Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՔԱՐՈՉ

«Եվ աշակերտներին հանեց մինչև Բեթանիա և բարձրացնելով իր ձեռքերը օրհնեց նրանց և երկինք համբարձավ» (Ղուկ. ԻԴ 50—52):

Աստծու Բանի Տնօրինության բոլոր տոները, որ հաստատեց երկրում, միանգամայն հրաշալի են և փառավոր: Իսկ այսօր Համբարձման տոնը բոլորի ամբողջացում է ցույց տալիս: Նախ, որ սկսեց Ծնունդից և կարգով եկավ խաչին, մահվան և գերեզմանից հարության: Եվ քառասուն օր հետո, այսօր երկինք համբարձավ և նստեց Հոր աջ կողմում:

Եվ դարձյալ հրաշալի է այս օրը և ի պատվի, որովհետև մեր բնությունը միավորվելով Աստծու Բանի հետ՝ բարձրանում է անգուգական փառքով: Եվ մեզ նույն պատիվն է խոստանում, ինչպես ասում է առաքյալը. «Նրա հետ հարություն տվեց և նրա հետ նստեցրեց երկնային տեղերում՝ Քրիստոսով» (Եփես. Բ 6): Ինքը՝ մեր Տերը խոստացավ «Եվ ուր ես եմ, այնտեղ էլ իմ ծառան կլինի» (Հովհ. ԺԲ 26), և երբ «կգնամ և ձեզ համար տեղ կպատրաստեմ. դարձյալ կգամ և ձեզ կառնեմ ինձ մոտ» (Հովհ. ԺԴ 2—3): Եվ ուր որ գտվան է, այնտեղ պետք է հավաքվեն անդամները:

Եվ ուր որ փնտան է, այնտեղ է հրավիր-

ված նաև հարսը, որ սուրբ Եկեղեցին է և Քրիստոսի հավատացյալները: Մենք չորս բանով հոգեպես Քրիստոսին հարս դարձանք:

Նախ Հոր, Որդու և Սուրբ Հոգու նկատմամբ հավատով:

Երկրորդ՝ ավագանի ծնունդով՝ ջրով և Հոգով:

Երրորդ՝ խաչի դրոշմը մեր ճակատի վրա կնքեցինք:

Չորրորդ՝ որ հավեցինք սուրբ մարմնին և արյան, և սրանցով հրավիրվեցինք Տիրոջ արքայություն: Ինչպես «Ով որ վերստին չծնվի ջրից և Հոգուց, չի մտնի Աստուծո արքայություն» (Հովհ. Գ 5) ըստ իր հրամանի:

Իսկ մենք՝ այժմ հրավիրյալներս, այսօր ուրախացանք Քրիստոսի՝ Իր արքայություն մտնելու հույսով, իսկ հետո՝ վայելումով՝ «երբ Հոր սեղանին բազմեցնի արժանավորներին և անցնի սպասարկելու» (Ղուկ. ԺԲ 37): Որի համար եկեղեցին երգում է այսօր. «Թող օրհնվի քո քաղցրության տարվա սպակը, Տեր»: Նախ պսակ նշա-

նակում է շրջանակ, ինչպես ասում է Սոդոմոնը. «Ելնում է արեգակը և մայր է մտնում և իր տեղն է ձգվում» (Ժող. Ա 5): Այսպես արդարության արեգակը՝ Քրիստոս ելավ Հորից և մտավ ամենասուրբ կույսի մեջ, ելավ արեգակը կույսի ծոցից և շրջելով մտավ հողի մեջ՝ գերեզման, և մեր բնությանը գերեզմանից ելավ և իր տեղում՝ Հոր աջ կողմում նստեց:

Երկրորդ՝ տարվա պսակն այն է, որ ցորենը հավաքվում է շտեմարանում, և գինին կարասի մեջ է հավաքվում և բոլոր վաստակածները ուրախանում են:

Նույնպես և մեզ համար ուրախություն է այսօր, քանի որ ցորենի հատիկը՝ մեր Տեր Քրիստոս ընկնելով հողի մեջ մեռավ և ելավ առատ և անապական ողկույզը մարմնով խաչի վրա ճնշվելով հավաքվեց հնձանի մեջ, այսինքն վարագույրի ներքնակողմում՝ որպես հաստատուն հույս մեզ և ուրախություն մեր սրտերին: Այս է, որ ասում է. «Թող օրհնվի քո քաղցրության տարվա պսակը, Տե՛ր»: Որ և ավետարանն է վկայում. «Աշակերտներին հանեց Բեթանիա, բարձրացրեց ձեռքերը և օրհնեց նրանց և երկինք համբարձավ»:

Եվ նախքան այս խոսքի մեկնությունը երեք բան պետք է հարցնել. առաջին, թե ո՞րտեղ ապրեց Քրիստոս մինչև երկինք համբարձալը, երկրորդ, թե ինչո՞ւ քառասուն օր հետո երկինք համբարձավ, երրորդ, հիսնյակ օրերի մասին:

Եվ ԱՌԱՋԻՆ գլուխը, թե հարությունից հետո որտեղ ապրեց Քրիստոս, մինչև որ երկինք համբարձավ: Վարդապետները ասում են, թե այս քառասուն օրերին Քրիստոս օդի վրա ապրեց: Եվ սա երեք պատճառով:

Նախ, որ երկիրը դատապարտության անձեռքի տակ էր ընկած Ադամի մեղքերի պատճառով, այն որ սասաց «անիծյալ լինի երկիրը քո գործերի պատճառով» (Ծննդ. Գ 17): Իսկ Քրիստոսի գալուստով բոլոր արարածները օրհնվեցին, քանի որ մեր բնությունը առնելով և երկրի վրա շրջելով, ջրի մեջ մկրտվելով և գերեզմանում թաղվելով մաքրեց ջուրն ու հողը, նույնպես մեռելներից հարություն առնելով և քառասուն օր օդում ապրելով օդն ու կրակը սրբեց, որոնք իրար են խառնված: Եվ դարձավ՝ տարրերը պղծված էին կոտորների գոհերից, այսինքն հուրը և օդը սրբեց զոհերի ճենճերի հոտերից, որոնք կանգնած էին օդի մեջ:

Երրորդ պատճառ, որ ոմանք հողն էին պաշտում, և ոմանք ջուրը, ոմանք օդը և ոմանք կրակը և տգիտությամբ աստված

էին ասում նրանց: Եկավ ինքը՝ ճշմարիտ Աստված և երևաց մարդկանց և Տնօրհնությամբ դեպի իրեն դարձրեց երկրպագությունը, ասելով՝ ես եմ ճշմարիտ Աստված, որին պետք է երկրպագել, իսկ դրանք բոլորը արարածներ են, այդ պատճառով քառասուն օր երևում էր նրանց և Աստծու արքայության մասին էր պատմում:

Եվ ոմանք ասում են, որ այս քառասուն օրերը հարությունից հետո Քրիստոս ապրեց Ադամի երկրավոր դրախտում իրեն հետ հարություն առածներով, և մխիթարեց Ենոքին և Եղիային մինչև երկինք համբարձավ և բոլոր սրբերի հոգիները նրա հետ:

Սակայն Ղուկասը [ավետարանիչն] ասում է, որ քառասուն օրերին Հիսուս երևաց աշակերտներին: Եվ Հովհաննեսը «այս երեք անգամ աշակերտներին երևաց մեռելներից հարություն առածը՝ Հիսուս» (Հովհ. ԻԱ 14): Սա այն է, որ Հովհաննես նշանավոր երևում է ասում, ուր հրաշքներ պատահեցին, այսինքն երկուսը վերանառանք և մեկը ծովեզերքին: Սակայն Ղուկաս այն է ասում, որ մինչև Համբարձումը օդում էր ապրել կամ դրախտում և բոլոր կիրակնամուտներին երևում էր աշակերտներին: Որովհետև վարդապետներն ասում են, թե տասն անգամ երևաց նրանց. հինգ՝ նույն օրը, երբ հարություն առավ մեռելներից, և հինգ՝ դարձյալ բոլոր կիրակնամուտներին երևում էր նրանց և մխիթարում, նրանց համբերության կոչ էր անում՝ նրանցից հեռանալու առթիվ, որպեսզի չտխրեն: Եվ Աստուծո արքայության մասին ասում էր, թե «Կգնամ և ձեզ համար տեղ կպատրաստեմ երկնքի արքայության մեջ»:

Այս մտածումով է, որ բոլոր կիրակնամուտներին գալստյան շարական են ասում և Սուրբ Աստվածն էլ, «որ եկար և գալու ես»: Սա առաջին գլուխն է:

Իսկ Երկրորդ, թե ինչու քառասուն օր հետո համբարձավ: Սրա համար վարդապետները երեք պատճառ են դնում:

Նախ, որ իմաստունները քառասունը կատարյալ թիվ են անվանում, որ չորս տասերից է բաղկանում, իսկ տասը կատարյալ թիվ է, և ըստ տարրերի թվի՝ չորսը աշխարհի գոյության սկիզբն է: Սա նշանակում է, որ Քրիստոս իր գալուստով վերջապետեց նորոգեց աշխարհը և նախկին սկզբնական կատարելության հասցրեց և ապա երկինք համբարձավ:

Երկրորդ, որ քառասունը է արու մանկան գոյությունը: Նշանակում է, թե այս քառասուն օրերին արիացնում էր աշա-

կերտներին և նրանց միջոցով բոլորին ա-
րիացնում էր առաքինի գործերի և թվե-
նամիների դեմ պատերազմի համար:

Երրորդ, ուրիշներ ասում են, թե Ադամ
հողից ստեղծվելով քառասուն օր հետո
դրվեց դրախտ, և կեսն ասում է, որ քա-
ռասուն օրից հետո էր գիտության ծառից
ուտելու պայմանը, ապա և կեսաց ծառից
ուտելը և տեղափոխվելը երկնքի արքայու-
թյուն: Այս մտքով է, որ մեջեջյալների քա-
ռասունք ենք կատարում, որպեսզի քառա-
սուն օր հետո հանգչի սրբերի կայանում,
ինչպես և Փիլիպպոս առաքյալին ասվեց
«քառասուն օր երկնքի արքայությունից
դուրս լինել և ապա մտնել»: Նույնպես
և մեր Տեղը քառասուն օր հետո համբար-
ձավ ասում են, սակայն սա բոլոր վարդա-
պետների կողմից ընդունված խոսք չէ, ո-
րովհետև Սուրբ Գիրքը այսպես չի ասում,
իսկ մենք լուրջում ենք պահպանում:

Սակայն մեր Տեղը՝ Հիսուս Քրիստոս
քառասուն օրը պատվեց, քանի որ երեք
քառասուններ պահեցողության մեջ էր:

Մի քառասունը պահեց մորից սրբու-
թյամբ ծնվելուց հետո և քառասնօրյա օրա-
կանում եկավ տաճար:

Եվ մեկը՝ մկրտությունից հետո պահեց
քառասուն օր և քառասուն գիշեր և հաղ-
թեց փորձող սատանային, որպես օրինակ
մեզ, ուր պետք է պահքով և աղոթքով մե-
նամարտել թշնամու՝ սատանայի դեմ: Եվ
մեկը՝ այս քառասունը պահեց հարություն-
նից հետո և ապա համբարձավ:

Եվ դարձյալ պատվեց քառասուն թիվը,
քանի որ քառասնօրյա մանուկ գոյացավ
սուրբ կույսի արգանդում, և քառասուն շա-
բաթ բնակվեց կույսի որովայնում և քառա-
սուն ամիս քարոզեց աշխարհում և քառա-
սուն ժամ մեռածների շարքում դասվեց:
Թեև երեսուն և երեք ժամ մնաց մեռելների
հետ դժոխքում, քանի որ կիրակի կեսգի-
շերին հարություն առավ, սակայն արշա-
լույսին երևաց աշակերտներին, որ լինում
է քառասուն ժամ: Այսպես նաև հարություն-
նից հետո քառասուն օր մնաց օդում՝ աշա-
կերտների հետ և համբարձավ Հոր մոտ:
Սա երկրորդի մասին:

Իսկ ԵՐՐՈՐԴ գլուխը Ջատկի հիսնօրեքի
մասին է:

Սա է պատճառը, որ օրենք է թագավո-
րական հարսանյաց ուրախությունը հիսուն
օր կատարել: Ինչպես որ մեր Տեղը երկ-
նավոր թագավոր է, կատարեց այս ուրա-
խությունը մեզ ասելով. «Պետք չէ, որ
հարսանքավորները սուգ պահեն, քանի
դեռ փեսան իրենց հետ է, սակայն երբ հե-

ռանա նրանցից, այն ժամանակ թող պաս
պահեն այդ օրերին» (Մատթ. Թ 15):

Եվ քանի որ Քրիստոս փեսա է, հար-
սանյաց տոնն էլ հիսուն օր է: Եվ որ մար-
գարեական այլ գիրք չեն կարդում եկեղե-
ցում, բացի Դավթի սաղմոսից, իր ավե-
տարանից, Նոր Կտակարանից՝ Գործք Ա-
ռաքելոց և ուրիշներ, սա է պատճառը:

Որովհետև ինչպես որ մարմնավոր հար-
սանքի ժամանակ ծախսն ու խարճը հո-
րանից է լինում, որ հարուստ է, իրենն էլ
այդպես է. Դավթը ըստ մարմնի Քրիստո-
սի հայրն է, այդ պատճառով էլ միայն նրա
սաղմոսն ենք երգում, և Նոր Կտակարանը,
որ Քրիստոսով է տրված:

Իսկ որ հիսուն օր պաս չի կանոնարկ-
ված, ոչ ուրբաթ և ոչ էլ չորեքշաբթի, եր-
կու պատճառ ունի:

Նախ ինչպես քառասնօրյաց պահեցողու-
թյան ժամանակ շաբաթ և կիրակին պահեց,
այնպես էլ հիսնօրեքի ժամանակ հրամա-
յում է ուտել ուրբաթ և չորեքշաբթի օրե-
րին: Եվ երկրորդ, ավետարանի հրաման-
ների համար, որ արգելեց ասելով. «Պետք
չէ, որ հարսանքավորները սուգ անեն և
պաս պահեն, քանի դեռ փեսան նրանց
հետ է»: Որովհետև այս հիսուն օրը Ջա-
տկի է, և Ջատկի ազատություն և ուրա-
խություն է թարգմանվում, որ ազատեց մեզ
դժոխքից և ուրախացրեց հոգեպես և մարմ-
նապես, որի համար էլ պաս չի նշանակ-
ված:

Իսկ եթե մեկը խոստում ունի, թող պա-
հի իր կարգը, ինչպես որ հրամայվել է կի-
րակի օրը ծունկի չգալ, այլ ոտքի կանգ-
նել և աղոթել, որովհետև Քրիստոսի հետ
հարություն առանք գերեզմանից և մեղ-
քերի մեջ գլորվելուց: Սակայն եթե մեկը
ապաշխարության կամ մեղքի տակ է ա-
ռանց խոստովանության, թող ծունկի գա-
նա: Այսպես էլ պահեցողության համար ընդո-
ւմի: Այս հիսուն օրը Ջատկի է, այդ պատ-
ճառով էլ կոչվում է Հիսունք, որ հիսուն
է, և կամ հիսունք, այսինքն հրեշտակնե-
րի ինն դասերի հետ ուրախանալով տո-
նում ենք Քրիստոսի Հարությունը: Սա է
հիսնօրեքին պաս չպահելու իմաստը:

Եվ այսօր, այս օրից՝ ինն օր պաս ենք
պահում միմյն Հոգեգալուստ, և կամ ուր-
բաթն ու չեքշաբթին՝ ինչպես կանոն է
դրել Մեծն Ներսես Հայրապետը և սա եր-
կու պատճառով:

Նախ, որ մույն ավետարանը հրամայում
է, թե «երբ փեսան հեռանա նրանցից, այդ
օրերին թող պաս պահեն», դրա համար
Համբարձումից հետո պետք է պահեցո-

դրությունն անել, որ բովանդակ ինն օր է, կամ եթե չեն կարող, ուրբաթն ու չորեքշաբթի պահեն, քանի որ հեռացավ մեզնից Փետան և մարմնական ուրախությունը պակասեց. թեպետ Հարության խորհուրդի համար հիսուն օր Ջատիկ է, սակայն Համբարձման համար՝ քառասուն օր: Եվ քանի որ ավետարանն ասում է «երբ հեռանա», այն ժամանակ: Եվ համբառնալու ժամը կեսօրին էր ամբողջ ժողովուրդին տեսանելի, ինչպես մկրտության ժամն էր կեսօրին և Հայրը վկայեց և Հոգին աղավաղեց և իջավ Նրա վրա, նույնպես և Թաքոր լեռան վրա այլակերպությունը կեսօրին էր, այդ պատճառով էլ ոմանք ստուգապես կեսօրին են Ջատիկ անում և այդ ժամից հետո պառ են պահում. սա առաջին պատճառն է:

Երկրորդ, որ երբ Տերը համբարձավ և առաքյալները դեպի արևելյան կողմ երկրպագեցին և վերադարձան Երուսաղեմի տաճար, ճգնում էին՝ պահեցողությանը և աղոթքներով՝ սպասելով Ս. Հոգու միախառնության, որ Բրիստոս խոստացավ նրանց, թե «Նստեցեք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ ես ողորկեմ ձեզ իմ Հոր ավետիսը, և զորությունն ստանաք բարձունքներից» (Ղուկ. ԻԴ 49): Այս տասներորդ օրը Ս. Հոգին իջավ նրանց մեջ և ուրախացան Սուրբ Հոգով: Դրա համար մենք էլ նրանց հետ դա պահում ենք արթությանը, որպեսզի Ս. Հոգու իջման արժանի լինենք. այսքանը որպես նախաբան:

Եվ այժմ վերադառնալով մեկնության մեր խոսքին, որ ասում է. «Հանեց նրանց մինչև Բեթանիա»:

Իսկ ո՞րտեղից հանեց: Պարզ է, որ Երուսաղեմից, քանի որ այսպես է պատմում Ղուկաս ավետարանիչը. «Մինչդեռ տակավին ուրախությունից չէին հավատում և զարմացած էին» (Ղուկ. ԻԴ 41):

Սա մարդկային բնության հատկանիշն է, որ երբ ցանկալի բանն են արժանանում, չեն հավատում, թե հասան կամ արդեն ունեցան, և այն բաներին, որ ասում են, ավելի են հավատում: Նույնպես և առաքյալները, երբ հասան իրենց բաղձանքին երկրայեցին, ինչպես որ Մատթեոսն է ասում. «և ոմանք երկրնստանքի մեջ ընկան»: Եվ Հովհաննեսը ասում է, թե «Ուրախացան աշակերտները, երբ տեսան տիրոջը» (Հովհ. ԻԴ 20): Սա ասում է, թե ուրախությունից զարմացել էին, երբ տեսան, որ Տերը թանձր մարմնով փակված դռներից մտավ նրանց մոտ: Դրա համար Տերը նրանց երկրաշունչությունը հավաստիության

փոխելու համար ասաց նրանց. «Ուտելու բան ունե՞ք» (Հովհ. ԻԴ 5), և նրանք նրան տվեցին խորոված ձկան մի կտոր և մեղրախորիս, ոչ թե ծաղ մեղր (մեղրահաց), այլ [հոսուն] մեղր, այսինքն յուղով և մեղրով պատրաստած հաց, որ իրենց բարեկամներն էին բերել. նրա առաջ սեղան դրեցին, և նա ըստ սովորության կերավ նրանց առաջ: Եվ հրամայեց նրանց «մնալ Երուսաղեմում, մինչև զորությունն ստանաք բարձունքներից»: Որովհետև ինչպես կառավարը ձիերը վարում է դեպի մարտ, և ինչպես զինվորը նախ զինվում է, հետո է մտնում մարտի մեջ, այդպես էլ առաքյալները կառք էին և Ս. Հոգին կառավար: Նաև առաքյալները զինվոր էին և նրանց գեներալն ու զորությունը Ս. Հոգին էր. պետք էր նախ Ս. Հոգու զորությունը գգնելու և զորանալ, և ապա մարտի մեջ մտնել հրեաների և հեթանոսների, թագավորների և ազգերի աշխարհի դեմ:

Եվ այդպես Հոգով զորանալով, տկար մարմնով հաղթեցին ամբողջ աշխարհին: Եվ տգետ ձկնորսները Հոգու իմաստությանը հաղթեցին աշխարհի բոլոր իմաստուններին և դարձրին ճշմարիտ աստվածգիտության:

Այն ժամանակ նրանց հանում է լեռան գլուխը, որ Երուսաղեմ քաղաքի դիմացն է՝ արևելյան կողմից: Եվ Բեթանիան լեռան այն կողմն է, որ Համբարձավ: Եվ թե ինչու Բեթանիայում Համբարձավ և ոչ այլ տեղ, սա է պատճառը, որովհետև Բեթանիա ճշմանակում է սգո և չարչարանքների տուն. մատնացույց է անում մեր բնությունը, որ վայելուչ դրախտից ընկանք այս երկիրը, որ սգո և չարչարանքների տեղ է, որտեղ մահացանք ինչպես Ղազարը: Եվ ինքը Բանն Աստված, մեր Տեր Հիսուս Բրիստոս եկավ մեզ մոտ և կցորդ դարձավ չարչարանքներին, մահվան և տխրության և ինչպես Ղազարի գերեզմանում արտասվեց, այնպես իր չարչարանքներով միաթարեց մեզ տխուր սգից: Եվ հարությունն առավ գերեզմանից և հարություն տվեց մեզ ինչպես Ղազարին և ազատեց մահից ու սգից, և առնելով մեր բնությունը՝ երկինք համբարձավ և մեզ խոստացավ նույն տեղը, ասելով. «Ուր ես եմ, այնտեղ էլ իմ ծառան պիտի լինի»: Այս է միտքը, որ Բեթանիայից երկինք համբարձավ:

Իսկ այն, որ աշակերտներին լեռան գլուխ հանեց, երեք պատճառով էր.

Նախ, ինչպես Եղիան լեռան վրայից վեր բարձրացավ և իր աշակերտ Եղիսեն տեսավ, այնպես էլ Բրիստոս լեռ ելավ, որ-

պետազի աշակերտները տեսնեն և իմանան, թե վեր' երկնքի բարձունքներն է համբառնալու:

Երկրորդ, ցույց է տալիս այն, որ եթե մեկը ուզում է Քրիստոսի ետևից գնալ երկինք, պետք է թողնի աշխարհի վայելքը և մարմնով առաքելության լեռը պիտի բարձրանա և մտքով միշտ «բարձունքի մասին պիտի մտածի, ուր Քրիստոս նրան տած է Աստծու աջ կողմում» (Կող. Գ 1):

Երրորդ, ինչպես որ Մովսեսին լեռան գլխին օրենսդիր դարձրեց հին Իսրայելին, այնպես էլ աշակերտներին հանեց լեռան գլխի և օրենսդիր դարձրեց ամբողջ աշխարհին՝ նոր Իսրայելին:

«Եվ բարձրացնելով ձեռքերը օրհնեց նրանց»:

Երկնաստեղծ ձեռքերով ձեռնադրեց առաքյալներին և այն ժամանակ նրանց դարձրեց կաթողիկոսներ, քանի որ նախապես նրանց տվել էր այլ աստիճաններ: Առաքյալները դպիր եղան՝ սպասավորելով ժողովրդին: Եվ ջահընկալներ երբ նրանց ասաց. «Դուք եք աշխարհի լույսը» (Մատթ. Ե 14): Եվ սարկավագներ՝ օժելով հիվանդներին: Եվ նրանց քահանա դարձրեց՝ տալով նրանց որ ունեն առաջին արտերի պտղից, որ քահանաներն էին ունում:

Եվ Հարությունից հետո, երբ Ս. Հոգի փչեց նրանց մեջ, նրանց եպիսկոպոսներ դարձրեց: Եվ նրանց հանելով Զիթենյաց լեռը, նրանց կաթողիկոսներ և պատրիարքներ դարձրեց, ամեն ինչ շնորհելով նրանց լիապես: Եվ սա հայտնվում է չորս վկայություններով:

Նախ որ Քրիստոս ձեռքերը բարձրացրեց և օրհնեց նրանց:

Երկրորդ վկան Ղուկասն է, որ ասում է, թե «առաքյալները ձեռքերը դնելով Ս. Հոգին էին ստանում» (Գործք. Ը 18):

Երրորդ վկայությունը այն է, որ բոլոր երկրներում, ուր գնացին առաքյալները, եպիսկոպոսներ և քահանաներ ձեռնադրեցին:

Չորրորդ, որ Իր աջով օրհնեց նրանց և մեր աջերին զորություն տվեց, որ նույն օրհնությունն ու աստիճանը տանք միմյանց, քանի որ նախ աստիճանն ենք տալիս և հետո սուրբ մեղոնով օծում, այդպես էլ մեր Տերը նախ բարձրացրած ձեռքերով օրհնեց նրանց՝ իշխանություն տալով և հետո Ս. Հոգին ողորկեց վերանստուն և օծեց նրանց:

«Եվ եղավ՝ երբ նա օրհնում էր նրանց, մեկնեց նրանցից և երկինք էր վերանում» (Ղուկ. ԻԴ 51):

Եվ ինչո՞ւ նախ մեկնեց նրանցից և հետո համբառնաց: Եվ սա երեք պատճառով.

Նախ մեկնեց նրանցից, այսինքն հեռագալ, որպեսզի երեխաների պես չկախվեն պարանոցից ու հագուստից, ինչպես Եղիսեն բռնեց Եղիայի մաշկեղենից և պատռեց երկու մասի, դրա համար էլ հեռացավ նրանցից և վերացավ երկինք:

Երկրորդ, որովհետև մենք էլ նախ հեռանում ենք իրարից և ապա ենք վերանում, քանի որ մահը զատում և հեռացնում է իրարից հոգին և մարմինը և սիրելիներին, և հետո ենք երկինք բարձրանում:

Երրորդ, հեռացավ աշակերտներից, որպեսզի բացառակալ և հայտնապես տեսնեն երկինք համբառնալը, ինչպես որ Գործքում է ասում, թե «մինչ նրանք տեսնում էին, վերացավ» (Գործք Ա 9): Քանի որ Հարության ավարտը տեսան նշաններով և խոսակցելով նրանց հետ, իսկ սկիզբը՝ ոչ: Եվ համբարձման ժամանակ սկիզբը տեսան, իսկ ավարտը՝ ոչ, որովհետև աչքերը չեն կարող երկնքի բարձրությունները տեսնել: Բայց երկինք վերանալը հրեշտակները ասացին, ինչպես Եղիան Եղիսենին պատմեց իր վերանալը:

Եվ երկու կերպով Եղիայի վերանալը նման է Քրիստոսի համբառնալուն. նախ, ինչպես Եղիսեն տեսավ իր ուսուցչի վերանալը, որպեսզի չասեն, թե Եզրաելը սպանեց նրան, նույնպես և աշակերտները տեսան վերանալը, որպեսզի հրեաները չասեն, թե Քրիստոս հարություն չառավ մեռելներից:

Երկրորդ ինչպես որ Եղիսենի կողմից կատարվող նշանները հավատարիմ վկա եղան իր վարդապետի համբառնալուն, որ խնդրեց, թե «երկինք քո հոգին թող լինի ինձ վրա» (Դ Թադ. Բ 9), այդպես էլ նշանները, որ առաքյալների ձեռքով էին կատարվում, ճշմարտեցին մեր Տիրոջ համբարձումը, որովհետև Նրա Հոգով և զորությամբ էին մեծամեծ նշաններ կատարում: Սակայն այսքանով տարբեր էր. Եղիան շարժումով և հրեղեն կառքով և հրեղեն երկվարներով վերև բարձրացավ. նախ որովհետև նա սոսկ մարդ էր, ինքնիրեն բարձրանալ չէր կարող: Երկրորդ, որ օղան խոստանալների պատերազմ կար նրա առաջ, ինչպես որ Մովսեսի մարմնի համար էին պատերազմ տալիս, նույնն էլ Եղիայի բարձրանալու ժամանակ, դրա համար բազում հեծյալ զորքերով և հրեղեն կառքերով ու ձիերով հետո կարողացավ բարձրանալ: Իսկ Հիսուս որովհետև Աստված էր և ոտնակոխ էր արել թշնամու ուժերը, կարիք չունեցավ հեծյալների, այլ իր

գործությամբ և իշխանությամբ երկինք բարձրացավ: «Եվ ապա փակեց Նրան նրանց աչքերից» (Գործք. Ա. 9): Ամպը նրա կարիքի համար չեղավ, այլ վեց պատճառներով ամպով բարձրացավ:

Նախ, որպեսզի Դավթի մարգարեությունը կատարվի. «Ով ընթանում է ամպերի վրա, և շրջում է հողմերի թևերի վրա» (Սղմ. ԺԳ 3):

Երկրորդ, նրան առաքյալների աչքից ծածկելու համար, որպեսզի շատ երկինք չանայն ակնապիշ:

Երրորդ, որպեսզի ցույց տա, թե նա է «որ հանում է ամպերը երկրի ծագերից» (Երեմ. Ժ. 13), որին այժմ ամպը սպասավորեց:

Չորրորդ՝ որովհետև աստվածային երեվումները միշտ ամպով է լինում, ինչպես որ Սինայում ամպով երևաց և Հոբին խոսում էր ամպի և մեզի միջից: Նաև Եղիային ամպով երևաց, մույնպես և Թաքոր [լեռան] վրա: Դրա համար էլ այսօր ամպով բարձրացավ:

Հինգերորդ, քանի որ լուսեղեն ամպով պիտի գա դատաստանի, ինչպես ասաց հրեշտակը. «Այսպես պիտի գա, ինչպես որ տեսաք նրան երկինք գնալիս» (Գործք. Ա. 11):

Վեցերորդ, քանի որ արդարներն էլ վախճանի օրը ամպով են բարձրանում երկինք, ինչպես ասում է առաքյալը. «Ամպով կեցնենք Տիրոջ ընդառաջ օդում, և այնպես ամեն ժամ Տիրոջ հետ կլինենք», դրա համար մույն խորհրդով մեր Տերը ամպով բարձրացավ երկինք: «Եվ նրանք երկրպագելով Երուսաղեմ վերադարձան մեծ ուրախությամբ» (Ղուկ. ԻԴ 52): Եղիսեն տխուր էր ուսուցչի բարձրանալու առթիվ, որի համար բռնեց հագուստից և երկու մասի պատռեց: Սրանք ինչո՞ւ ուրախությամբ դարձան: Սա էլ չորս պատճառով:

Նախ, որ Եղիան շոշափելի մարդ էր, որ վերև բարձրանալով, չէր լինում աշակերտների հետ: Իսկ Հիսուս Աստված էր անպարփակելի թեպետ համբարձավ, միշտ նրանց հետ էր ըստ Իր խոստումին, թե «Ձեզ հետ եմ ամեն օր մինչև աշխարհի վերջը» (Մատթ. ԻԸ 20), դրա համար էին ուրախ:

Երկրորդ, ուրախացան, որովհետև տեսան, որ աղայիսի փառքով հարություն առավ և երկինք համբարձավ Տերը, որին հրեաները նախատիքներով խաչ հանեցին և սպանեցին:

Երրորդ, ուրախ էին, որովհետև սպասում էին Ս. Հոգու գալուստին, քանի որ ասաց. Եթե ես չգնամ, մխիթարիչը չի

գա ձեզ մոտ, իսկ եթե գնամ, մխիթարիչ Ս. Հոգին կուղարկեմ ձեզ մոտ, և նա կուսուցանի և կհիշեցնի ձեզ ամեն ինչ» (Հովհ. ԺԶ 7):

Չորրորդ, ուրախ էին խոստումի համար, որ ասաց, թե «Կգնամ և տեղ կպատրաստեմ ձեզ համար, դարձյալ կգամ և ձեզ կառնեմ ինձ մոտ, և ուր ես եմ, այնտեղ և իմ ծառան պիտի լինի» (Հովհ. ԺԴ 2-3):

Այս չորս պատճառներով, երբ Քրիստոսի առաքյալները դեպի արևելք երկրպագեցին, Երուսաղեմ վերադարձան մեծ ուրախությամբ: Որովհետև նախ երկու լուսավոր այրեր հասան նրանց և ասացին. «Այս Հիսուսը, որ ձեզ մոտից երկինք բարձրացավ, այսպես էլ կգա» (Գործք. Ա. 11)՝ աստվածությամբ մարմնին միացած: Այս ավետիսը լսելուց հետո խնդությամբ դարձան:

«Եվ միշտ տաճարում էին, գովում և օրհնում էին Աստծուն» (Ղուկ. ԻԴ 53): Գործքի մեջ ասում է, թե «ելան վերնատուն, ուր աղոթատեղին իսկ էր» (Գործք. Ա. 13): Հայտնի է, որ կերակրի և քնի ծամին էին վերնատուն գնում: Իսկ վարդապետության ժամին տաճարում էին լինում: Գովում էին Տնօրինության ամեն խորհուրդ, Ծննդից մինչև խաչ և հարություն և համբարձում: Եվ օրհնում էին Հայր Աստծուն՝ Որդուն առաքողին, և ամենատուրբ Հոգուն, որով լցվում են բոլոր արարածները, որ իրենք սպասում էին Նրա գալուստին: Այստեղ պետք է իմանալ նաև, որ Տերը հրեշտակների բազում բանակներով բարձրացավ և սուրբ հոգիներով, որոնք Նրա հետ հարություն առան գերեզմանից և Նրա հետ էին քառասուն օր, նրանցով բարձրացավ և անցավ բոլոր գերաշխարհիկ անմարմինների դասերից: Եվ ողելից հրեշտակները, որոնք Տնօրինության խորհրդատուներ էին, ձայն էին տալիս վերին դասերին, որ միջին քառանյալատությունների առաջին դասն է:

«Բարձրացրեք, իշխաններ, ձեր դռները վեր, և թող մտնի փառաց թագավորը» (Սղմ. ԻԲ 7): Եվ նրանք ասում էին. «Ո՛վ է այս փառաց թագավորը» (Սղմ. ԻԳ 10): Ըստ Եսայի՝ «Իսկ այս ո՛վ է, որ դիմելով գալիս է Եդովմից, սրա հագուստի կարմրությունը քոսորից ավելի ուժեղ է» (Եսայի ԿԳ 1): Քանի որ տեսան, որ թանձր մարմնով մոտեցավ հաստատուն երկրին արարչության երկրորդ օրը: Եվ անցավ երկնքի կամարը, և ջրային հարկի թանձրամած նյութը, որ չկարողացավ արգելք դառնալ աստվածախառն մարմնին: Որովհետև ինչպես կույսից ծնվեց՝ կուսությու-

նը անխախտելի մնալով, և քարով կնքված՝ հարություն առալ և փակված դռներից մտալ աշակերտների մոտ: Այսպես անցավ հաստատունի (երկրի) և ջրեղեն կամարի և բոլոր երկինքների միջով: Ինչպես առաքյալն ասում է. «Ելավ բոլոր երկինքներից վեր, որպեսզի լցնի ամեն ինչ»: Այդ պատճառով էլ ոմանք հիացած հարցնում էին Գաբրիելի և Միքայելի դասերին, որոնք տեղյակ էին և սպասավորներ էին Փրկչի Տնօրինության՝ սպասավորելով ծրանուդին, մկրտության, թաղման, հարության և համբարձման: Նրանց հարցնում էին. «Ո՞վ է այս փառաց թագավորը»: Եվ նրանք պատասխանում էին, թե փառքը հենց իրենն է և ոչ ուրիշից ստացված, և երկնքի գործերի Տերն է և գործյալամբ՝ հզոր: Որ հաղթահարեց պատերազմը մարդկային մարմնով, որ տկարացավ և գորացրեց աստվածությանը: Եվ ապա լսելով նրանցից՝ տեսան Նրա աստվածության փառքը: Եվ խոնարհվելով-երկրպագելով ընդունեցին միջին դասերը, և այսպես՝ վերինները ըստ կարգի ամեն օր ուրախությամբ ընդունելով, տոն էին կատարում, ինչպես ասաց հրեշտակը, որ չորրորդ դասում էր՝ ի պաշտպանություն մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչին, որ հարցրեց նրա ուշանալու պատճառը, և նա պատասխանեց, թե այսօր երկնքում իմ դասի մեծ տոնն էր:

Քանի որ ինն օր սա մինչև Ս. Հոգու գալուստը հրեշտակների ինն դասերի կողմից ընդունվեց, և հաստատեց նրանց և

ուրախացրեց մարդկանց փրկության համար՝ հրեշտակներից սկսած աթոռներով վերջացրած:

Ապա տասներորդ օրը, երբ նստեց Հոր աջ կողմում աստվածային փառքի մեջ հանգստանալով, քանի որ շաբաթը՝ հանգիստ է նշանակում, որովհետև այն օրը, որ Աստված հանգստացավ իր գործերից, շաբաթ օր էր, ինչպես ասում է Գիրքը: Եվ նույն օրը գերեզմանում հանգչեց իր չարչարանքներից, և նույն շաբաթ օրը նստեց Հոր աջ կողմում և հանգստացավ Տնօրինական գործերից:

Իսկ կիրակի օր երրորդ ժամուն՝ որպես պարգև ստանալով Ս. Հոգին ուղարկում է առաքյալների դասին և լցնում նրանց Ս. Հոգու բոլոր պարգևներով և շնորհներով: Որով և մենք սպասում ենք Ս. Հոգու բազմաշխարհ պարգևներին և առատաձիշ շնորհներին, որպեսզի մեզ մխիթարի մեր կյանքի բազում տխրությունների համար, և իր ողորմության շնորհով լցնի մեր հոգին, մարմինը և միտքը, և Սուրբ Հոգու քարությանը մեզ առաջնորդի հավիտենական կյանքի բարի և ուղիղ նավահանգիստը մարդասեր Փրկիչը մեր և Աստված Հիսուս Քրիստոս, որին վայել է փառք և երկրպագություն, իշխանություն և պատիվ իր Հոր և ամենասուրբ Հոգու հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

Թարգմանություն՝
Ե. Մելքոնյանի

